Kingdom of the Netherlands

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«**Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ**»

Մրցույթի մասնակցության հայտադիմումի ուղեցույց
Մայիս, 2016

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

1. Հետաքրքրության նամակ (ազատ ձևով),
2. Ազատ ձևով գրված հայտ, որը պիտի պարունակի.
   - հայտատու (ներ) ի անուն ազգանունը, մասնագիտությունը,
   - հետազոտության անվանումը,
   - հակիրճ տեղեկատվություն հետազոտության սպասվող բովանդակության վերաբերյալ
   - ի՞նչ աղբյուրներ են ուսումնասիրվելու հետազոտության համար (օրինակներ),
   - վերջին երկու նման հետազոտությունների կարճ նկարագիր ԿԱՄ այլ աշխատանք, որով կհիմնավորվեն հայտատուի՝ հետազոտություն կատարելու համար անհրաժեշտ կարողությունները: Յուրաքանչյուր նկարագիր չպիտի գերազանցի պարբերությունը: Ընդունելի է նաև հղումը հրապարակված գործի ամփոփագրի կամ հրապարակված գործի կցումը հայտադիմումի փաթեթին,
   - որևէ հավելյալ դիտարկում կամ դատողություն, որ կցանկանայիք նշել:
3. ինքնակենսագրական (ներ) (ազատ ձևով):

Հայտադիմումի փաթեթի նյութերը չեն վերադարձվելու:

Մրցույթի մասնակցության անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ուղարկել Նախագծի ղեկավար Անուշ Մարգարյանին amargaryan@epfound.am հասցեով, գլխագրում նշելով «Tolerance in literature»: Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք կապվել (+37410) 251575x111 հեռախոսահամարով կամ amargaryan@epfound.am էլ. փոստով:

Ուսումնասիրությանը տրամադրվում է ընդհանուր առմամբ **4 ամիս**: Պայմանագրի ստորագրման դեպքում ուսումնասիրության նախնական տարբերակը ԵՀՀ ներկայացնելու համար տրամադրվելու է **երկու ամիս**, որից հետո **մեկ ամսվա** ընթացքում ԵՀՀ-ն կներկայացնի իր դիտողություններն ու առաջարկները: Դրանից հետո հեղինակներին կտրվի ևս **մեկ ամիս** փոփոխությունները կատարելու և վերջնական տարբերակը պատրաստելու համար:

Բոլոր նյութերը պիտի ներկայացվեն հայերեն: Հետազոտություն լեզուն հայերենն է: Բացառիկ դեպքերում (օտարալեզու հայ գրականություն, օտարալեզու հետազոտող) ԵՀՀ-ն կդիտարկի այլ լեզուներով հայտադիմում և հետազոտության կատարման առաջարկ: